Պարույր Սևակ

Աշնանային

Քո քաղցրությունն աշունի վիճակվել է հիմա ինձ,
Երբ դեռ գարուն է այստեղ՝ իմ կրծքի ներքո:
Աշնանաբույր-դեղնաթույր այս մետաքսի շորը քո
Այնպես լավ է քեզ սազում, դարձնում այնպես հմայիչ:
Ինչպե՞ս կոչել՝ չգիտե՛մ, բայց սա ինչ-որ մի կապ չի՝
Այս քո աշունը շռայլ ու ջերմությունն իմ գարնան:
Ա՛խ, թե անցյալըդ հանկարծ մի դեղնաթույր շոր դառնա
Ու վա՛ր սահի, ընկնի՛ ցած, քեզ այլևս չկպչի՛...
Քո անցյա՛լը... Չհիշե՛նք: Եկ աշնան պես եղիր բաց,
Առատաձեռն՝ աշնան պես, աշնան նման՝ պտղատու.
Եկ մաճառի՛ց չխոսենք - աշնա՛ն գինու կթող տուր,
Թեպետ արդեն՝ դեռ չրմպած՝ ես գինով եմ ու հարբած:
...Դրսում աշուն է դեղին, տերևաթափ է հիմա,-
Աշխարհո՛վ մեկ տարածված քո ստվերն է դա կարծես.
Քե՛զ եմ տեսնում ամենուր, դո՞ւ ես՝ աշո՛ւն ես դարձել,
Անծայր աշո՛ւն ես դարձել ու քաղցրացել ինձ համար...

31.VII.1946թ
Չանախչի